այնպէս որ դժուար է նախատեսել Գլադստոնի սկսած դժուար գործի աջող վախճանը:

Լորդերի ժողովի մեծամասնութեան առաջնորդ մարկիզ Սալիսբուրի չը վախեցաւ այն դժուարութիւններից, որոնց ծագիլը կարող է վտանգաւոր լինել լորդերի ժողովի համար: Ակներև է, որ այդպէս վարվելով, լորդերը իրանց յոյսը դրել էին համայնքների ժողովի կալուածատէր անդամների վրա, որոնք ակամայից հնազանդվել էին Գլադստոնին: Դժուար է գուշակել, թէ մինիստրութիւնը ինչպէս դուրս կը գայ իր ծանր դրութենից: Ակներև է միայն, որ Իռլանդիայի մէջ հանգստութեան վերահաստատելը յետաձգված է մինչև համայնքների ժողովի գործունէութեան հետևեալ շրջանը, եթէ կառավարութեան և լորդերի ժողովի մէջ փոխադարձ զիջումների վրա հիմնված համաձայնութիւն չի կայանայ:

ԹԻՒՐՔԻԱ

—

„Polit. Corresp." լրագրի թղթակիցը հաղորդում է Կ. Պօլսից հետևեալը: Վերջին պետական դատը գլխաւորապէս ուղղված էր նախկին սուլթան Մուրադի դէմ, որի մտաւոր ընդունակութիւնները հետզհետէ լաւանում են: Այժմեան սուլթանը հաւատացած է, որ Մուրադ կամ նորա մայրը դաւադրութիւններ են կազմում, կամ դաւադիրների գործիքներ են: Միտհադ-փաշայի դէմ ուղղած մեղադրական ակտի մի մասը ակներև էր դարձնում, որ սուլթան Մուրադ և նորա մայրը գլխաւորապէս մեղաւոր էին Աբդուլ-Ազիզի սպանութեան մէջ: Բացի այդ Մահմուդ-Դամադ և Նուրի փաշան մահուան պատժի սպառնալիքներից ստիպված մի դոկումենտ ստորագրեցին, որի մէջ ասված է, թէ նրանք հրամայեցին սպանել Աբդուլ-Ազիզին Մուրադի կարգադրութեան համեմատ: Իսկոյն ենթադրեցին, որ գործը դրանով չի վերջանայ: Պալատի մէջ մի նոր քննութիւն ըսկսվեց, որից երևաց, թէ Մուրադ, պահապան զինուորներին կաշառելով, նրանց նամակներ էր տալիս իր կուսակիցների մասնաժողովին հասցնելու համար:

Բացի այդ յայտնվել են հետևեալ մանրամասները: Սուլթան Մուրադի խելագարութենից յետոյ երբ մինիստրների խորհուրդը վճռեց նոր սուլթան ընտրել, Միտհադ-փաշա Աբդուլ-Համիդին առաջարկեց Թիւրքիայի գահը այն պայմանով, որ նա իշխանութիւնը Մուրադին վերադարձնի, եթէ նա առողջանայ: Աբդուլ-Համիդ առաջ մերժեց այդ պայմանը, բայց երբ Միտհադ-փաշա սպառնաց, որ մինիստրների խորհուրդը այդ դէպքում նրա եղբօրը կ'ընտրի, նա իր բարեկամների խորհրդով ընդունեց Միտհադի առաջարկութիւնը և մի դոկումենտ ստորագրեց, որ վերյիշեալ բովանդակութիւն ունէր: Աբդուլ-Համիդի գահ բարձրանալուց յետոյ Միտհադ-փաշա Եւրոպա աքսորվեցաւ, որովհետև չը կամեցաւ վերադարձնել այդ դոկումենտը և յայտնեց, թէ նա մնացել է Բ. Դրան արխիվի մէջ: Վերջին դատաստանի նպատակն էր Մուրադի վարկը վերջնականապէս ոչնչացնել հասարակական կարծիքի առաջ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, 5 օգոստոսի

Այսօր կարողացայ հիւր լինել Պատրիարքի սեփական տանը Խաս-քէօյ, որ մէկ ժամվայ ճանապարհ է շոգենաւով իմ կացած տեղից. պատրիարքարանի մէջ յաճախողների բազմութիւնից հնարք չը կայ մարդավարի կերպով մի բանի վրա խօսել: Պատրիարքին սովորականից աւելի զուարթ և առողջ գտայ: «Երևի ուրախալի լուրեր կան մեր խնդրի վերաբերմամբ, սրբազան», նկատեցի նորան:—«Ինչո՞ւ», եղաւ քմծիծաղ պատասխանը.—«Ձեզ վրա է երևում այդ»: Սորանով ուզում եմ ցոյց տալ թէ մինչև որ աստիճան կապված է Ներսէսի բարոյական և մտաւոր զօրութեան հետ հայոց խնդրի հոգը: Պատրիարքը ցոյց տուաւ մի նամակ, որը հէնց նոր էր ստացել Վիէննայի մէջ ֆրանսերէն լեզուով հրատարակվող «Journal d'Orient-ի» խմբագրատնից, որը խոստանում է պատրիարքին նոյն ազգաւ ընթացքը ի պաշտպանութիւն հայոց դատի շարունակել անընդհատ, եթէ միայն իր լրագիրը «խրախոյս գտնէ» «de la part de la nation de sa Béatitude».—Ահա յիշեալ լրագրի սեփական խօսքերը:—«Ի՞նչ, սորան ինչ պիտի արած» հարցրեց կրօնաւոր դիւցազը մտահոգութեամբ:—«Ի հարկէ հարկաւոր է կամ խրճիթդ ծախել և մի երկու հազար բուբլ ուղարկել հայերի օրգան կանգնող լրագրին կամ թէ մի երկու հարիւր հատ բաժանորդ գտնել»:—«Ի՞նչ, յետոյ, ո՞րն է աւելի հեշտը» հարցրեց պատրիարքը նոյն զուարթ դէմքով:—Ի հարկէ հեշտը տունդ ծախելն է, քան թէ Կ. Պօլսի հայերից երկու բաժանորդ գտնելը մի եւրոպական լրագրին, որը հայոց օրգան է ուզում լինել երկու—երեք հարիւր աւելի բաժանորդ ունենալով հայերից:—«Օ՜, ծանր է բարեկամ....»՝ եղան անտարբեր ազգի արժանաւոր առաջնորդի խօսքերը:

Այս ամենից յետ ինքն ըստ ինքեան ծագում է հարց Վիէննայի լրագրին ռուսահայոց կողմից բաժանորդ գրվելու: Ես չգիտեմ, գիտէք թէ պ. Գիւլօրիէն լինելով մի մասնագէտ լեզուաբան, որին լրագիր ունենալը հարկաւոր է աւելի զանազան գիտնական և հնագիտական հարցեր վճռելու համար, քան թէ օրական ընթացիկ հարցերի, գիտէք թէ ասում եմ, պ. Գիւլօրիէի ապագայ լրագիրը շատ օգուտներ կարողացաւ ունենալ հայոց ազգի անունը Եւրոպայում արծարծելու համար, բայց եթէ պակաս խրախոյսի և համակրանքից է արժան մի լրագիր, որը արդէն հիմնված է, ունէ ազդեցութիւն և պարապվում է միայն և եթ օրական և հերթական հարցերով, մեթէ, կրկնում եմ Կովկասի հայերը, որոնք մի քանի ամսվայ մէջ միայն «Մշակի» խմբագրատուն 42 հազար բուբլ թափեցին Հայաստանի իրանց թանգագին արիւնակիցների կեանքը փրկելու համար, արդեօք նոյն նուիրատու բազմաթիւ անձիք հայերը պիտի անտարբեր մնան Վիէննայի այնչափ յայտնի մի լրագրին, որին կարծես երկինքն է ուղարկել հայոց ներկայի և ապագայի հարցերը պաշտպանելու համար մի այնպիսի տէրութեան և մայրաքաղաքի մէջ, որի աչառութեան և շահախնդրութեան վրա ոչ ոք եւրոպական կաբինետներից չէ կարող կասկած անգամ ունենալ: Ուրեմն, ոչինչ տարակոյս չը կայ որ պատրիարքի յոյսը ի դերև չը պիտի դուրս գայ Վիէննայի հայոց օրգանին օգնելու վերաբերմամբ, որը á propos ասած մեր տէրութեան շահերին ամենևին չէ դիպչում, այլ ընդհակառակը շատ համակրանքով է վերաբերվում. այսպիսի մի ուղղութիւն մի աւստրիական լրագրի կողմից դէպի ռուսաց քաղաքականութիւնը իհարկէ ոչ պակաս օգուտ է և հաճելի մեր տէրութեան համար, որը այս պատճառով բնականաբար ոչինչ արգելք դնելու կարևորութիւն չի ունենայ այդ ռուսասէր և հայասէր լրագրի տարածման մեր մէջ... Այս մասին բոլոր յոյսը ռուսահայոց վրա է, որոնք իրանց հայաստանցի եղբայրների բաղդին աջակցելու վերաբերմամբ Կ. Պօլսի ճառաբան-պոռոտախօսողների վրա թող էլ բնաւ յոյս չը դնեն....

Մի երկու ժամ զրոյցից յետ պատրիարքի համեստ տանը, գնացինք միասին Խասգիւղի Ներսէսեան վարժարանի պարգևաբաշխութեան հանդէսը, որին ներկայ էր առ քիչը հինգ վեց հազար կին և տղամարդ բազմութիւն: Պարգևաբաշխութեան հանդէսը տևեց երեք ու կէս ժամ: Այսպիսի հանդէսներ մեր մէջ չը կան և չեն էլ կարող տեղի ունենալ, ինչպէս չը համապատասխանող և աւելորդ բան ռուսահայերի լուրջ և ծանր բնաւորութեան. այդպիսի բաներ հարկաւոր են միայն Կ. Պօլսի ցուցամոլ մարդկանց համար, որոնց մի առանձին կարիք կայ միշտ դէպքեր ունենալ անբովանդակ և ճռնչող ճառերով փայլելու համար, մէջ բերելով աշխարհիս ամենաառաջին գիտնականից սկսած մինչև ամենավերջի խեղկատակը, որը կրում է միայն օտար անուն, մանաւանդ ֆրանսիական:

Պարգևաբաշխութեան հանդիսին կարդացվեցան ճառեր՝ հայերէն, թիւրքերէն, ֆրանսերէն և անգլիերէն լեզուներով: Օտար լեզուներ որչափ կարելի է շատ կոտրատելն էլ մի առանձին ախտ է դառած ամեն տեղի հայերի մէջ, մանաւանդ Կ. Պօլսի: Զարմանալի է, որ միայն հայը պիտի անպատճառ օտարների թութակը լինի ջարդել ամեն տեսակ լեզուներ, բացի միայն իր սեփականը: Հետաքրքիր է իմանալ՝ ինչո՞ւ Կ. Պօլսի յոյները ևս չունեն հայերի կապիկութիւնը օտար լեզուներ բլբլացնելու մէջ, այլ նոքա ստիպում են զօռով օտարներին իրանց լեզուով խօսել, իսկ հայը միայն պիտի գտնվի ստրուկ ամենի հետ նորա լեզուով բարբառել, թէկուզ այդ լեզուն լինի վրացերէն, քիւրդերէն, ջուհուտերէն և գնչուերէն. Երբ պիտի ճանաչենք արդեօք մեր ազգային պատիւը և մեր անձնական արժանաւորութիւնը....

Չը նայելով պարգևաբաշխութեան հանդէսի գործած խորթ տպաւորութեան մի ռուսահայի վրա, երեխայոց պատրաստութիւնը ատենաբանութիւնների և ազգային երգերի կողմից շատ լաւ էր. Ի հարկէ այստեղ չեմ խօսում վարժարանի պրօգրամի վրա, որը Կ. Պօլսի մէջ ամենուրեք շատ թերի է, վերացական և օդային....

Հանդէսը վերջանալուց յետ պատրիարքը ատենաբանութիւն արեց, որը վերջացրեց այստեղի լրագրական բորբոքված հարցով, այն է, ինչ է հարկաւոր նախ հայ ժողովրդին՝ հաց թէ ճառ և «լոյս»: Պատրիարքը վերջացրեց իր խօսքերը երեք շեշտած կրկնութեամբ. «հաց, հաց, դարձեալ հաց»:

Հայոց հարցի մասին կը հաղորդեմ ձեզ այն թարմ լուրը, որ տասնուհինգ օրից կը սկսվեն բաց և պաշտօնական բանակցութիւնները Թիւրքիայի հետ չորս տէրութեան ամենահամերաշխ և ազդու միջամտութեամբ՝ Անգլիայի, Ռուսիայի Իտալիայի և Աւստրիայի: Ի հարկէ Ֆրանսիան, որչափ էլ առ այժմ շատ զբաղված լինի զանազան Բու-Ամէմների շարժումներով Ալժիրիայում և Տրիպոլիսում, դարձեալ հայոց գործին բոլոր սրտով նա կը մասնակցի, իսկ սրանից յետ կը մնայ Գերմանիան, որը այնչափ յայտնի է իր խոհուն քաղաքագիտութեամբ, որ երբէք բացառութիւն չի կազմի այնտեղ, ուր ինքը միայնակ է մնացած.... Ուրեմն յոյս և գործ մեր կողմից, որչափ կարող ենք, օրինակ այս ինչ այն ինչ եւրոպական օրգան ձեռք առնել և այլն:

Երէկ «Standart» լրագրից արտատպվեց Մասիսի մէջ Գրիգոր Արծրունու գործունէութեան մասին հայկական խնդրի ասպարիզում: Մասիսի այդ համարները այնպէս յափշտակվեցան, որ մի քանի խմբագիրներ դեռ չը կարողացան գտնել իրանց ստանալի թիւը կարդալու համար: Այդ յօդուածը կարդալուց յետ հասկացայ թէ «Порядокъ»-ի յայտնի առաջնորդող յօդուածը հայերի մասին գրված է «Standart» լրագրի ազդեցութեան տակ, որովհետև եթէ հէնց մի փոքր ուշադրութիւն դարձնէք, կը տեսնէք, որ «Порядокъ» կրկնել է ճշդութեամբ մի և նոյնը, անելով մի և նոյն սխալները ևս, օրինակ ասելով թէ Վենետիկը ևս հայոց շարժման և ագիտացիաների կենտրոն է և այլն: Այսպէս թէ այնպէս մենք ապրում ենք այժմ մի այնպիսի վճռողական և հանդիսաւոր րոպէում, որ ցանկալի է որչափ շատ, այնչափ աւելի խօսվի եւրոպական լրագիրների մէջ մեր մասին. այս է և պատրիարքի մշտական կարծիքը, որը միշտ ասում է. «մենք անպատրաստից սկսեցինք մեր գործը, հարկաւոր է գոնէ հիմայ օդի մէջ չը թողնել նրան, այլ ամեն տեսակ հնարքներով նրան մարմնացնել և իրականութիւն տալ»:

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Մասիսի» մէջ կարդում ենք հետևեալը: Վիէննայի «Ժուռնալ դ'Օրիան» ֆրանսերէն շաբաթաթերթը կը շարունակէ համակրալից յօդուածներ և հատուածներ հրատարակել հայոց նկատմամբ: Մեր ազգը քաղաքակրթեալ աշխարհի ծանօթացնելու համար այսպիսի թերթեր յոյժ օգտակար կրնան լինել: Իր վերջին թւոց մէջ (7 օգոստոսի), զոր երէկվայ թղթատարով ստացանք, «Ժուռնալ դ'Օրիան» կը յայտարարէ թէ նշանաւոր հայազգիներու կողմէ հաւանութեան և համակրութեան արտայայտութիւններ կը հասնին իրեն: Կը կարծեմք թէ «աննշան», բայց ֆրանսերէն հասկցող ուրիշ հայազգիներ ալ կրնան քաջալերել նոյն թերթը, բաժանորդ գրվելով, որ շատ ծանր զոհողութիւն մը չէ, քանի որ եռամսեայն 5 ֆրանկ է միայն և տարեկանը 20 ֆրանկ: Կը կրկնենք թէ պէտք չէ խոյս տալ այսպիսի փոքրիկ զոհողութիւններէ, եթէ կը փափաքիմք որ Եւրոպա ճիշդ տեղեկութիւններ ունենայ մեր ազգին վրա:

—«Nordd. Allg. Zt.» լրագիրը հաղորդում է որ օգոստոսի 3 (15) տեղի ունեցան Շչէտտինում մեծ անկարգութիւններ: Աւելի քան 800 հոգուց բաղկացած ամբոխը ման էր գալիս փողոցներում, սպառնալով հրէաների տները կոտրելու: Պոլիցիան չը թոյլ տուեց անկարգութիւնների կատարելուն: Մօտ 40 մարդ կալանաւորված են:

—Հռոմում տեղի ունեցան հակապապական ժողովներ: Մինչև 153 հանրապետական ընկերութիւններ ուղարկեցին այդ ժողովների անդամներին համակրական ուղերձներ:

—Մարսէլից հեռագրում են որ օգոստոսի 3-ին գոմէշների արշաւանքների հանդէսի ժամանակ ժողովրդի համար շինված բարձր տախտակամածը փլչելով, 15 հոգի հանդիսականներից սպանվեցան և 150 հոգուց աւելի վիրաւորվեցան:

—Պրագայի ազգային նորաշէն թատրոնը այրվեցաւ:

—«Հայրենիք» լրագրում կարդում ենք հետևեալ լուրը: «Այս օրերս քանի մը ֆրանսիացի եզուիտներ Սամսոն եկան, Ասիա երթալ հաստատվելու համար: Կըսվի թէ ասոնց ետևէն մեծ խումբ մ'ալ պիտի գայ պապական եկեղեցին ծաւալելու համար Ասիոյ ներսերը: Այսպիսի մեծ հոսանքի մը դիմադրելու համար հայք ինչ կը խորհին և ինչ միջոցներու ձեռնարկած են արդեօք:» Ահա, ուրեմն, Ազարեան սրբազանի յաղթութեան հետևանքները: Ֆրանսիայից աքսորված եզուիտները գնում են այժմ խեղճ հայ ժողովրդի արիւնը ծծելու:

—Նոյն «Հայրենիք» լրագրում կարդում ենք «Stamboul» լրագրից քաղած հետևեալ լուրերը: «Տեղական իշխանութիւնք Սամսոնի և Ամասիայի մէջ ճամբայ մը, կառուղի, շինելու հրաման ընդունեցան: Յունական նոր ընկերութիւն մը, որ բաւական դրամագլխի տէր է, մտադիր է եղեր Պիրէոսի, Կ. Պօլսոյ և Ասիոյ ծովեզերաց մէջ նաւարկութեան նոր գիծ մը բանալու: Բազմաթիւ յոյներ սոյն ձեռնարկութեան բաժանորդ գրվեր են»:

—Կ. Պօլսի թիւրք «Հագըգաթ» լրագիրը մի խիստ ծանր յօդուած է գրել հայերի, Հայաստանի և հայոց խնդրի դէմ: Լրագիրը սպառնում է հայերին, որ նրանք կը ջնջվեն քիւրդերի ձեռքով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 11 օգոստոսի: Ընտրութիւնները վերջացան: Ընտրված են 85 միապետականներ և բոնապարտեաններ, 398 հանրապետականներ, որոնք 45 նոր տեղեր ձեռք բերին: Գամբետտայի ընտրութեան մասին վճռում են, իբր թէ Բելվիլի երկրորդ շրջանի մէջ ձայների օրինաւոր մեծամասնութիւն չէ ստացել:

ՆԻՒ-ԻՕՐԿ, 11 օգոստոսի: Իռլանդական կուսակցութեան դինամիտային խորհուրդը մի ազդարարութեամբ նախազգուշացնում է անգլիական դրօշակ կրող նաւերի սկսեալ օգոստոսի 20-ից, որովհետև իռլանդացիները մի գիշերվայ մէջ կոչնչացնեն այդպիսի բոլոր նաւերը, որոնք կը գտնվեն Նիւ-Իօրկի, Հալիֆաքսի, Սիդնէյի, Կվեբեկի, Մելբուռնի, Կենտուկկիի և Սան-Ֆրանցիսկոյի մէջ:

ԲԵՐՆ, 11 օգոստոսի: Միացեալ խորհուրդը արգելեց գաղթական Պէօտր Կրապոտկինին ապրել Շվէյցարիայի մէջ:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 11 օգոստոսի: Գարֆիլդի առողջութիւնը մի փոքր լաւացել է:

ՓԱՐԻԶ, 11 օգոստոսի: Ընտրութիւնների հետևանքները ստուգելուց յետոյ յայտնվեցաւ, որ ընտրվել են 38 միապետականներ, 42 բոնապարտեաններ և 403 հանրապետականներ, որոնք 58 նոր տեղեր են ձեռք բերել: 64 կրկնաքուէարկութիւններ են լինելու:

ՌԻԳԱ, 12 օգոստոսի: Գիշերը այրվեցաւ Բերմանի փայտ սղոցելու գործարանը և մօտ հարիւր բնակեցրած տներ: Վնասը միլիոնից աւելի է:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ